



ԾԵՐԱՅՈՂ ԱՇԽԱՏՈՒԺ.

ԱՎԱԳՆԱՅՈՂ ՍՊԱՌՆԱԼԻՔ

DOI: 10.52174/2579-2989_2023.4-16

Հիմնաբառեր. բնակչության ծերացում, ժողովրդագրություն, աշխատուժ, արտադրողականության աճ

Անի ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու

2011 թ. ավարտել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղը և 2013 թ. ընդունվել ՀՊՏՀ ասպիրանտուրա: 2017 թ. պաշտպանել է թեկնածուական պրեզենտացիայությունը և ստացել փոփոխության թեկնածուի գիտական աստիճան:

2015-2016 թթ. դասավանդել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում: 2016 թ.-ին աշխատանքի է անցել «Ամբերդ» հեղուկության կենտրոնում: 2017 թ.-ից մինչ օրս դասավանդում է ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնում:



ORCID <https://orcid.org/0000-0002-6883-455X>

Բնակչության ծերացումը երկրներին սպառնացող լրջագույն մարտահրավեր է, որը բացասական ազդեցություն ունի աշխատուժի կառուցվածքի և արտադրողականության աճի տեմպի վրա: Ժողովրդագրական փոփոխությունների անցանկալի հետևանքներից զերծ չէ նաև Հայաստանը:

Հողվածում կատարվել է Հայաստանի և ԵԱՏՄ երկրների ժողովրդագրական պատկերի համեմատական վերլուծություն: Արձանագրված արդյունքներն արտացոլում են բնակչության ծերացման բացասական ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա: Հետևությունն այն է, որ փարեց բնակչության մասնաբաժնի շարունակական աճի հիմ ախնդիրը կարևորագույն սպառնալիք է Հայաստանի տնտեսության համար, որն արտացոլվում է աշխատուժի թվաքանակի և արտադրողականության աճի տեմպի նվազող հեղուկացում: Այս առումով, մեր երկրին դեռևս չի հաջողվել մեղմել բնակչության ծերացման բացասական հետևանքները և, տեխնոլոգիական, տնտեսական և մարդկային ներուժի արդյունավետ օգտագործման հաշվին ապահովել արտադրողականության աճ:

Աշխատուժն առանցքային դերակատարություն ունի երկրի տնտեսական մրցունակության մակարդակի բարձրացման և աշխատանքի արտադրողականության աճի ապահովման գործում: Այն անքակտելիորեն կապված է բնակչության կենսամակարդակի և երկրի տնտեսական ներուժի յուրացման հետ: Այս առումով, անհրաժեշտություն է առաջանում

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Բնակչությունն ըստ տարիքային խմբերի, 1950-2050 թթ. (հազ. մարդ)¹

Տարիքային խումբը	1950	1990	2020	2023	2030	2050
0-14	472	1073	571	566	484	377
15-64	800	2296	1887	1831	1786	1635
60+	167	335	540	577	626	784
65+	113	188	348	381	489	561
80+	16	36	89	78	76	170
Ընդհանուր	1385	3557	2806	2778	2760	2573

ուսումնասիրելու Հայաստանի աշխատուժի կառուցվածքն ու դրա փոփոխման միտումները, ինչպես նաև բացահայտելու «հետնախորշերը», որոնք կհիմնավորեն որոշակի ուղղություններում իրականացվող պետական քաղաքականության հրատապությունը:

Աշխատուժի առանձնահատկություններից մեկը դրա անխզելի կապն է երկրի ժողովրդագրական փոփոխությունների հետ: Միջազգային կառույցների գնահատումների համաձայն՝ Հայաստանի բնակչության ծերացման ու թվաքանակի կրճատման միտումները գնալով խորանում են, ինչն էլ անցանկալի հետևանքներ է թողնում աշխատանքի շուկայի վրա²: Կանխատեսվում է, որ 2050 թվականին 15-64 տարիքային խմբի բնակչության թվաքանակը կկրճատվի և կկազմի 1,635 հազ. մարդ, իսկ 65-ից բարձր տարիքի բնակչության թվաքանակը նկատելիորեն կաճի՝ հասնելով 561 հազ. մարդու (աղյուսակ 1):

ՄԱԿ-ի դասակարգմամբ՝ եթե 65-ից բարձր տարիքային խմբի բնակչության տեսակարար կշիռն ընդհանուր բնակչության մեջ 7 տոկոսից բարձր է, ապա այդ երկիրը համարվում է ծերացող ("aging"), 14 տոկոսից ավելիի դեպքում՝ ծերացած ("aged"), իսկ երբ գերազանցում է 20 տոկոսը՝ գերծերացած ("super-aged")³: Այս ցուցանիշով Հայաստանը մոտենում է ծերացած երկրների սահմանագծին, իսկ 2050

թվականին արդեն համարվելու է գերծերացած: 2023 թվականի տվյալներով՝ Հայաստանում 65-ից բարձր տարիքային խմբի բնակչության մասնաբաժինը 13,7 տոկոս է, իսկ ՄԱԿ-ի կանխատեսումների համաձայն՝ 2050 թվականին այն կազմելու է 21,8 տոկոս, ինչը նշանակում է, որ Հայաստանում յուրաքանչյուր հինգ մարդուց մեկն արդեն կլինի կենսաթոշակառու:


Մտահոգիչ է այն հանգամանքը, որ 0-14 և 65-ից բարձր տարիքային խմբերի միջև «ճեղքվածքը» տարեցտարի նվազում է, իսկ արդեն 2030 թվականից սկսած՝ կանխատեսվում է, որ 65-ից բարձր տարիքային խմբի բնակչության տեսակարար կշիռը նկատելիորեն գերազանցելու է 0-14 տարիքային խմբի մասնաբաժինը (գծապատկեր 1):

Կրճատվող 0-14 տարիքային խմբի բնակչությունը լրջագույն սպառնալիք է՝ աշխատունակ տարիքի բնակչության համալրման տեսանկյունից: Այս ցուցանիշով վերջին երեսուն տարիների ընթացքում Հայաստանն ամենամեծ կրճատումն է գրանցել ԵԱՏՄ երկրների շարքում: Այսպես՝ 0-14 տարիքային խմբի բնակչության մասնաբաժինն ընդհանուր բնակչության մեջ 1990 թվականին կազմում էր 30,2 տոկոս, իսկ արդեն 2023 թվականին՝ 20,4 տոկոս: Համեմատության համար նշենք, որ Ղազախստանի դեպքում նույն ցուցանիշը 29,6 տոկոս է, Ղրղզստանինը՝ 34,3 տո-

¹ Աղբյուրը՝ Demographic changes in Asia and the Pacific, Economic and Social Commission for Asia and the Pacific, United Nations, <https://www.population-trends-asiapacific.org/data/ARM>

² Առավել մանրամասն տե՛ս՝ S. Aiyar, C. Ebeke and X. Shao (2016), The Impact of Workforce Aging on European Productivity, International Monetary Fund, 2016, <https://www.imf.org/external/pubs/ft/wp/2016/wp16238.pdf>, տե՛ս նաև N.Maestas, K.J. Mullen, D. Powell, The effect of population aging on economic growth, the labor force and productivity, National Bureau of Economic Research, NBER Working Paper No. 22452, July 2016, Revised June 2022, page 25, https://www.nber.org/system/files/working_papers/w22452/w22452.pdf

³ Աղբյուրը՝ World Bank Support to Aging Countries, Approach Paper, 2019, May 28, page 2, https://ieg.worldbankgroup.org/sites/default/files/Data/reports/ap_agingcountries.pdf



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1




Տարբեր տարիքային խմբերի բնակչության փոփոխման միտումները, 1950-2050 թթ. (%)⁴

կուս, Ադրբեջանինը՝ 22,9 տոկոս, Վրաստանինը՝ 21,3 տոկոս, Թուրքիայինը՝ 23 տոկոս⁵:

Հայաստանի բնակչության ծերացման միտումներն անխուսափելիորեն հանգեցնում են բացասական տնտեսական հետևանքների⁶: Տնտեսագիտական գրականությունում շրջանառվում է այն մտտեցումը, որ բնակչության ծերացման բացասական ազդեցությունը տնտեսական աճի վրա տեղի է ունենում երկու կարևորագույն օղակ-

ների՝ աշխատուժի կրճատման և արտադրողականության նվազեցման միջոցով⁷: Այս առումով, Հայաստանում տարեց բնակչության թվի շարունակական աճի և 0-14 տարիքային խմբի բնակչության կրճատման «գորշ» պատկերը խտացված է աշխատուժի թվաքանակի և արտադրողականության աճի տեմպի նվազող ուրվագծերում: Գծապատկեր 2-ից ակնառու է, որ 2008-2021 թթ. աշխատուժի թվաքանակը նկատելիորեն կրճատվել է: Ներկա-




ԳԾԱՊԱՏԿԵՐ 2



Աշխատուժի թվաքանակի փոփոխման միտումները, 2008-2021 թթ.⁸

⁴ Աղբյուրը՝ Demographic changes in Asia and the Pacific, Economic and Social Commission for Asia and the Pacific, <https://www.population-trends-asiapacific.org/data/ARM>: Կետագծերով նշված են կանխատեսումները:
⁵ Աղբյուրը՝ Demographic changes in Asia and the Pacific, Economic and Social Commission for Asia and the Pacific, <https://www.population-trends-asiapacific.org/data>
⁶ Աղբյուրը՝ H.H. Lee, K. Shin, Nonlinear effects of population aging on economic growth, Hitotsubashi Institute for Advanced Study, Japan, April, 2019, page 14, https://hermes-ir.lib.hit-u.ac.jp/hermes/ir/re/30369/070_hiasDP-E-86.pdf
⁷ Առավել մանրամասն տե՛ս՝ F. Daniele, T.Honiden, A. C. Lembecke, Ageing and productivity growth in OECD regions: Combating the economic impact of ageing through productivity growth? https://www.oecd-ilibrary.org/sites/dc2ae16d-en/index.html?itemId=%2Fcontent%2Fcomponent%2Fdc2ae16d-en&fbclid=IwAR3OMqVJ6_ERRvOHSqrQp6DCPKwao3oL8T6RjI7bfnM-WeSqY7cs3TsiGjc , տե՛ս նաև S. Aiyar, C. Ebeke and X. Shao (2016), The Impact of Workforce Aging on European Productivity, International Monetary Fund, 2016, <https://www.imf.org/external/pubs/ft/wp/2016/wp16238.pdf>
⁸ Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազա, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_2%20Population%20and%20social%20processes_23%20Employment%20and%20unemployment/PS-eu-11-2021.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Աշխատուժն ըստ տարիքային խմբերի, 2008-2021 թթ. (հազ. մարդ)⁹

յիս բացասական միտումների շարունակականությունը հիմք է ստեղծում առաջիկա տասը տարում աշխատուժի թվաքանակի նվազման միտումների պահպանման համար: Այս առումով, առանցքային նշանակություն ունի աշխատուժի համալրման հնարավորությունների ընդլայնմանն ուղղված պետական պրոակտիվ քաղաքականության վարումը:

Բացասական տեղաշարժեր են արձանագրվել նաև աշխատուժի կառուցվածքում: Այսպես՝ 2008-2021 թթ. նկատելիորեն նվազել է 15-24 և 40-55 տարիքային խմբերի աշխատուժի թվաքանակը, փոխարենը՝ կրկնակի աճել 60-64 տարիքային խմբինը: Խորանում է 15-24 և 55-64 տարիքային խմբերի աշխատունակ բնակչության միջև «խզումը»: Երիտասարդների և տարեցների միջև «ճեղքվածքն» առավել նկատելի է զբաղվածության տարիքային կառուցվածքում, որից էլ բխում է զբաղվածների «ձերացման» հիմնախնդիրը (գծապատկեր 3):

Խնդրահարույց է 20-29 տարիքային խմբի աշխատուժի և հատկապես զբաղվածների թվաքանակի կրճատումը, քանի որ հենց այս տարիքային խմբում են ընդգրկված առավել «որակյալ» կադրերը: Աղյուսակ 2-ում երևում է, որ բարձրագույն և հետբուհական կրթական մակարդակ ունեցող աշխատուժը 20-34 տարիքային խմբի աշխատուժի 44 տոկոսն է: Աշխատ-

ուժի ընդհանուր թվաքանակում առավել մեծ մասնաբաժին կազմող 35-64 տարիքային խմբում բարձր կրթական մակարդակ ունի այս տարիքային խմբի աշխատուժի ընդամենը մեկ երրորդը:

Չնայած երիտասարդ աշխատուժի մեջ անհամեմատ մեծ է բարձր կրթական մակարդակ ունեցողների մասնաբաժինը, այնուամենայնիվ, խնդրահարույց է կրթության, զբաղվածության և վերապատրաստման ծրագրերում երիտասարդների մասնակցությունը, որն էլ մասամբ պատկերացում է տալիս երիտասարդների կրթական և աշխատանքային ներուժի, ինչպես նաև աշխատուժի համալրման հնարավորությունների մասին: Վերջին տասնամյակում կրթության, զբաղվածության և վերապատրաստման մեջ չներառված երիտասարդների (Not in Education, Employment, or Training, NEET) տեսակարար կշռի ցուցանիշով Հայաստանը շարունակաբար գերազանցում է ԵԱՏՄ բոլոր երկրներին (օրինակ՝ երեք անգամ ավելի բարձր է Բելառուսի մակարդակից) (գծապատկեր 4): Սա խիստ բացասական ազդակ է, որը վկայում է երիտասարդների՝ սոցիալապես ռիսկային խմբում հայտնվելու վտանգների առաջացման մասին: Այսինքն՝ Հայաստանում երիտասարդները, ամենայն հավանականությամբ, կարող են հայտնվել աղքատության գծից ներքև՝ չունենալով իրենց տնտեսական վիճակը բարելավելու բավա-

⁹ Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազա, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStat-Bank_2%20Population%20and%20social%20processes_23%20Employment%20and%20unemployment/PS-eu-11-2021.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb: Տարիքային խմբերը խոչորացվել են հեղինակի կողմից:

ԱՐՅՈՒՍԱԿ 2

Աշխատուժի կրթական մակարդակն ըստ տարիքային խմբերի, 2021 թ. (%)¹⁰

	15-19	20-34	35-64	65+
Ցածր	48	2	3	4
Միջին	52	54	68	67
Բարձր	-	44	29	29


րար հմտություններ:

Չնայած երիտասարդ աշխատուժի մեջ անհամեմատ մեծ է բարձր կրթական մակարդակ ունեցողների մասնաբաժինը, այնուամենայնիվ, խնդրահարույց է կրթության, զբաղվածության և վերապատրաստման ծրագրերում երիտասարդների մասնակցությունը, որն էլ մասամբ պատկերացում է տալիս երիտասարդների կրթական և աշխատանքային ներուժի, ինչպես նաև աշխատուժի համալրման հնարավորությունների մասին: Վերջին տասնամյակում կրթության, զբաղվածության և վերապատրաստման մեջ չներառված երիտասարդների (Not in Education, Employment, or Training, NEET) տեսակարար կշռի ցուցանիշով Հայաստանը շարունակաբար գերազանցում է ԵԱՏՄ բոլոր երկրներին (օրինակ՝ երեք անգամ ավելի բարձր է Բելառուսի մակարդակից) (գծապատկեր 4): Սա խիստ բացասական ազդակ է, որը

վկայում է երիտասարդների՝ սոցիալապես ռիսկային խմբում հայտնվելու վտանգների առաջացման մասին: Այսինքն՝ Հայաստանում երիտասարդները, մեծ հավանականությամբ, կարող են հայտնվել աղքատության գծից ներքև, ինչպես նաև չունենլ իրենց տնտեսական վիճակը բարելավելու բավարար հմտություններ:

Այս առումով, ուսանելի կարելի է համարել եվրոպական երկրների փորձը, որոնք բարեհաջող կերպով երիտասարդներին ներգրավում են կրթության, զբաղվածության և վերապատրաստման ծրագրերում և նման կերպ մեղմում բնակչության ծերացման հետևանքները: Պատահական չէ, որ կրթության, զբաղվածության և վերապատրաստման մեջ ներառված երիտասարդների տեսանկյունից բարձր մակարդակ ունեցող երկրները միաժամանակ աչքի են ընկնում աշխատանքի արտադրողականության անհամեմատ բարձր աստիճանով:

Մասնագիտական շրջանակներում ակտիվորեն քննարկվում է բնակչության ծերացման ազդեցությունն աշխատանքի արտադրողականության աճի վրա: Մի շարք տնտեսագետների, այդ թվում՝ Ն. Մայստասի, Կ. Մուլենի, Դ. Պաուելի, Զ. Ֆեյրերի, Զ. Ֆերնալդի, Ռ. Գորդոնի, Շ. Այարի փորձառական (էմպիրիկ) հետազոտություն-




ԳԾԱՊԱՍԿԵՐ 4

Կրթության, զբաղվածության և վերապատրաստման մեջ չներառված երիտասարդների (Not in Education, Employment, or Training, NEET) մասնաբաժինն ընդհանուր երիտասարդ բնակչության մեջ, 2011-2021 թթ.¹¹

¹⁰ Աղբյուրը՝ Աշխատուժ 2018-2021 թթ., ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 92, https://armstat.am/file/article/lab_market_2022_2.pdf: Ցածր է համարվում հիմնական ընդհանուր և ցածր, միջինը՝ միջնակարգ ընդհանուր, միջին մասնագիտական և նախամասնագիտական (արհեստագործական), բարձրը՝ բարձրագույն և հետրոնական կրթությունը:

¹¹ Աղբյուրը՝ Համաշխարհային Բանկի տվյալների բազա, <https://data.worldbank.org/indicator/SL.UEM.NEET.ZS?locations=AM>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

Մեկ աշխատողի հաշվով թողարկման (ՀՆԱ-ն ըստ գնողունակության համարժեքի) տարեկան աճի տեմպը, 2000-2021 թթ. (%)¹²

ների առանցքում այն պնդումն է, որ տարեց բնակչության տեսակարար կշռի ավելացումը բացասական ազդեցություն ունի աշխատանքի արտադրողականության աճի վրա¹³: Այս տրամաբանությունը գործում է նաև Հայաստանի դեպքում: Գծապատկեր 5-ում կարելի է նկատել, որ Հայաստանի արտադրողականության աճի տեմպը տարեցտարի դանդաղում է՝ զիջելով ԵԱՏՄ մյուս երկրներին: Ավելին, 2020 թվականից առկա է նաև նվազման միտում:

Աշխատանքի միջազգային կազմակերպության հրապարակած աշխատուժի արտադրողականության ցուցանիշներով Հայաստանը դեռևս նկատելիորեն հետ է մնում ինչպես միջին եկամուտ ունեցող, այնպես էլ ԵԱՏՄ (բացառությամբ՝ Ղրղզստանի) երկրներից:

Կարելի է նկատել, որ երկու ցուցանիշի դեպքում էլ Հայաստանի համար դեռևս անհասանելի է Ղազախստանի և Ռուսաստանի արտադրողականության մակարդակը: Ընդ որում, Հայաստանը մեծապես զիջում է մեկ աշխատողի հաշվով թո-



ղարկված ՀՆԱ ցուցանիշով: Գծապատկեր 6-ում երևում է, որ Ռուսաստանում և Ղազախստանում մեկ աշխատողը մոտ 1,7, իսկ միավոր աշխատաժամանակում՝ մոտ 1,5 անգամ ավելի շատ արդյունք է ստեղծում, քան Հայաստանում:

Նշենք, որ արտադրողականության բարձրացման հետ կապված հիմնախնդիրը կառուցվածքային բնույթի է: Զբաղվածության կառուցվածքի ուսումնասիրությունից կարելի է նկատել, որ, չնայած գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռը 2021 թվականին 30,3 տոկոս էր, սակայն այս ոլորտի կողմից ստեղծված ավելացված արժեքը ՀՆԱ ընդամենը 11,3 տոկոսն էր, փոխարենը՝ արդյունաբերության ոլորտում, որտեղ զբաղվածների մասնաբաժինը 17,5 տոկոս էր, ստեղծված ավելացված արժեքը կազմում էր 26,6 տոկոս¹⁴: Զբաղվածության՝ դեռևս խորհրդային համակարգից ժառանգած նման կառուցվածքը, ըստ էության, վկայում է գյուղատնտեսության ոլորտի ցածր արտադրողականության մասին, որտեղ կենտրոնացված է աշխատուժի մոտ մեկ

¹² Աղբյուրը՝ Statistics on Labor productivity, International Labor Organization, <https://ilostat.ilo.org/topics/labour-productivity/>

¹³ Առավել մանրամասն տե՛ս՝ F. Daniele, T.Honiden, A. C. Lembcke, Ageing and productivity growth in OECD regions: Combating the economic impact of ageing through productivity growth? https://www.oecd-ilibrary.org/sites/dc2ae16d-en/index.html?itemId=%2Fcontent%2Fcomponent%2Fdc2ae16d-en&fbclid=IwAR30MqVj6_ERRvwOHSqrQp6DCPkwo3oL8T6RjI7bfnM-WeSqY7cs3TsiGjc, տե՛ս նաև S. Aiyar, C. Ebeke and X. Shao (2016), The Impact of Workforce Aging on European Productivity, International Monetary Fund, 2016, <https://www.imf.org/external/pubs/ft/wp/2016/wp16238.pdf>, տե՛ս նաև N. Maestas, K. Mullen, D. Powell, The effect of population aging on economic growth, the labor force and productivity, National Bureau of Economic Research, NBER Working Paper No. 22452, July 2016, Revised June 2022, page 25, https://www.nber.org/system/files/working_papers/w22452/w22452.pdf

¹⁴ Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի տվյալների բազա, <https://data.worldbank.org/indicator/SL.IND.EMPL.ZS?locations=AM>: Արդյունաբերության ոլորտի ավելացված արժեքը ներառում է շինարարության ոլորտի կողմից ստեղծված ավելացված արժեքը:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

Միավոր աշխատաժամանակում թողարկված ՀՆԱ-ն, 2005-2021 թթ. (ձախ կողմում) և մեկ աշխատողի հաշվով թողարկված ՀՆԱ-ն (ըստ գնողունակության համարժեքի), 1991-2022 թթ. (աջ կողմում)¹⁵

երրորդը: Դրական է համարվում գյուղատնտեսության ոլորտից ծառայությունների ոլորտ աշխատուժի տեղաշարժը, որը հիմնականում բնորոշ է զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրներին: Վերջին տարիներին Հայաստանում աճել է ծառայությունների ոլորտում զբաղվածության մասնաբաժինը՝ հասնելով 52 տոկոսի, որն ապահովում է ՀՆԱ 52.8 տոկոսի չափով ավելացված արժեք¹⁶: Ընդհանուր առմամբ, այս ուղղությամբ աշխատուժի տեղաշարժերը նկատելի են, սակայն դրանք դանդաղ են և բավարար չեն արտադրականության շոշափելի աճ արձանագրելու համար:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ գործնականում բնակչության ծերացումն առավելապես քիչ ազդեցություն ունի այն երկրներում, որտեղ անհամեմատ մեծ է արդյունաբերության տեսակարար կշիռը և արտադրական գործընթացների ավտոմատացմամբ հնարավոր է ապահովել արտադրականության բարձր մակարդակ: Այսպես՝ տնտեսագետներ Դ. Աճեմոլյուն և Պ. Ռեստրեպոն առաջ են քաշում այն մոտեցումը, որ ծերացող բնակչությամբ երկրներն առավել հակված են արտադրական գործընթացների արդիականացման և վերագինման՝ այդպիսով չեզոքացնելով ծերացման բացասական ազդեցությունն

արտադրողականության աճի վրա¹⁷: Բավարար չափով կապիտալ միջոցների առկայության պայմաններում երիտասարդ աշխատուժի պակասը նպաստում է ավտոմատացված տեխնոլոգիաների ներդրմանը, ինչն էլ, իր հերթին, չեզոքացնում է աշխատուժի սակավության բացասական հետևանքները և հանգեցնում արտադրողականության աճին: Բարձր եկամուտ ունեցող երկրներին նմանօրինակ մոտեցմամբ հաջողվել է լուծել արտադրողականության աճի հիմնախնդիրը և, դրա շնորհիվ, ապահովել տնտեսական աճի բարձր մակարդակ: Եվրոպական երկրներին, որոնց մեծ մասը կարելի է համարել անզամ ծերացած, հաջողվել է ձեռք բերել արտադրողականության անհամեմատ բարձր մակարդակ՝ տեխնոլոգիական առաջընթացի, ինչպես նաև տնտեսական և մարդկային ներուժի իրացման արդյունքում: Այս տեսանկյունից, բնակչության ծերացման սպառնալիքն առավել ահագնացող է տնտեսական և տեխնոլոգիական սահմանափակ ներուժ ունեցող երկրների դեպքում: Վերջիններս չունեն բավարար հնարավորություններ աշխատուժի ծերացման հետևանքով բնակչության մեկ շնչի հաշվով թողարկված ՀՆԱ ցածր աճին հակազդելու համար:

Այսպիսով՝ աշխատունակ տարիքի բնակ-

¹⁵ Աղբյուրը՝ Statistics on Labour productivity, International Labour Organization, <https://ilostat.ilo.org/topics/labour-productivity/>
¹⁶ Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի տվյալների բազա, <https://data.worldbank.org/indicator/NV.SRV.TOTL.ZS?locations=AM>
¹⁷ Աղբյուրը՝ D. Acemoglu and P. Restrepo, Secular Stagnation? The Effect of Aging on Economic Growth in the Age of Automation, American Economic Review: Papers & Proceedings 2017, 107(5): pages 174–179, <https://doi.org/10.1257/aer.p20171101>

չության թվաքանակի նվազման և դրա արագ անկման հեռանկարը: Տարեց բնակչության շարունակական աճն ու երիտասարդ բնակչության կրճատման միտումներն առավելապես հանգեցրել են տարեց և երիտասարդ աշխատուժի միջև «ճեղքվածքի» խորացմանը՝ ի վնաս երիտասարդ աշխատուժի: Դա բացասաբար է անդրադառնում տնտեսության վրա՝ դրսևորվելով աշխատուժի թվաքանակի ու աշխատանքի արտադրողականության աճի կրճատմամբ: Սակայն, անցանկալի հետևանքներով հանդերձ, ծերացող բնակչություն ունեցող երկրները դատապարտված չեն ցածր արտադրողականության: Միջազգային փորձում քիչ չեն դեպքերը,

երբ ծերացող բնակչություն ունեցող երկրներին հաջողվել է ապահովել արտադրողականության անհամեմատ բարձր մակարդակ՝ շնորհիվ տեխնոլոգիական առաջընթացի, ինչպես նաև տնտեսական և մարդկային ներուժի յուրացման: Այս առումով, ավտոմատացված տեխնոլոգիաների ներդրումը տնտեսական աճի վրա բնակչության ծերացման բացասական հետևանքների չեզոքացման լավագույն միջոց է: Նմանատիպ մոտեցումը ուղենշային բնույթ պետք է կրի՝ պետական քաղաքականության գերակայությունների վերանայման և իրագործման գործիքակազմի ընտրության տեսանկյունից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աշխատուժ 2018-2021 թթ. , ՀՀ վիճակագրական կոմիտե, https://armstat.am/file/article/lab_market_2022_2.pdf
2. ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազա, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_2%20Population%20and%20social%20processes__23%20Employment%20and%20unemployment/PS-eu-11-2021.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb
3. Համաշխարհային բանկի տվյալների բազա, <https://data.worldbank.org/indicator/SL.UEM.NEET.ZS?locations=AM>
4. D. Acemoglu and P. Restrepo, Secular Stagnation? The Effect of Aging on Economic Growth in the Age of Automation, American Economic Review: Papers & Proceedings 2017, 107(5), <https://doi.org/10.1257/aer.p20171101>
5. Demographic changes in Asia and the Pacific, Economic and Social Commission for Asia and the Pacific, <https://www.population-trends-asiapacific.org/data>
6. F. Daniele, T. Honiden, A. C. Lembcke, Ageing and productivity growth in OECD regions: Combatting the economic impact of ageing through productivity growth? https://www.oecd-ilibrary.org/sites/dc2ae16d-en/index.html?itemId=%2Fcontent%2Fcomponent%2Fdc2ae16d-en&fbclid=IwAR3OMqVJ6_ERRvwOHSqrQp6DcPkwo3oL8T6Rjl7bfhMWeSqY7cs3TsiGjc
7. H.H. Lee, K. Shin, Nonlinear effects of population aging on economic growth, Hitotsubashi Institute for Advanced Study, Japan, April, 2019, https://hermes-ir.lib.hit-u.ac.jp/hermes/ir/re/30369/070_hiasDP-E-86.pdf
8. N. Maestas, K. J. Mullen, D. Powell, The effect of population aging on economic growth, the labor force and productivity, National Bureau of Economic Research, NBER Working Paper No. 22452, July 2016, Revised June 2022, https://www.nber.org/system/files/working_papers/w22452/w22452.pdf
9. S. Aiyar, C. Ebeke and X. Shao (2016), The Impact of Workforce Aging on European Productivity, International Monetary Fund, 2016, <https://www.imf.org/external/pubs/ft/wp/2016/wp16238.pdf>
10. Statistics on Labour productivity, International Labour Organization, <https://ilostat.ilo.org/topics/labour-productivity/>
11. World Bank Support to Aging Countries, Approach Paper, 2019, May 28, https://ieg.worldbankgroup.org/sites/default/files/Data/reports/ap_agingcountries.pdf

Ани ХАЧАТРЯН

*Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук*

СОЦИАЛЬНАЯ ПОЛИТИКА

СТАРЕЮЩАЯ РАБОЧАЯ СИЛА: УЖАСАЮЩАЯ УГРОЗА

Старение населения является серьезной проблемой, угрожающей стран мира. Оно оказывает негативное воздействие на структуру рабочей силы и темпы роста производительности. Армения также не застрахована от нежелательных последствий демографических изменений.

В статье проведен сравнительный анализ демографической ситуации в Армении и странах ЕАЭС. Полученные результаты отражают негативное воздействие старения населения на экономику Армении. Исходя из полученных данных можно утвердить, что проблема постоянного роста доли пожилого населения является большой угрозой для экономики Армении. Это проявляется в сокращении численности рабочей силы и снижении темпов роста производительности труда. В связи с этим, пока не удалось смягчить неблагоприятные последствия старения населения и обеспечить рост производительности труда за счет эффективного использования технологического, экономического и человеческого потенциала.

Ключевые слова: старение населения, демография, рабочая сила, рост производительности

Ani KHACHATRYAN

*Senior researcher at «Amberd» Research center, ASUE,
PhD in Economics*

SOCIAL POLICY

AGING WORKER: HORRIFIC THREAT

The aging of the population is a serious issue that countries face. It has a negative impact on the structure of the labor force and productivity growth rates. Armenia cannot avoid the undesirable consequences of demographic changes.

The article represents a comparative analysis of the demographic situation in Armenia and the EAEU countries. The recorded results reflect the negative influence of aging population on Armenian economy. Based on the findings, it can be concluded that the problem of the continuous increase in the share of the elderly population is a significant threat to Armenian economy, resulting in a reduction in the number of workforce and growth rate of labor productivity. Consequently, we have not yet been able to mitigate the negative consequences of an aging population and ensure an increase in labor productivity through the effective utilization of technological, economic, and human potential.

Keywords: population aging, demography, labor force, productivity growth